ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ 2

2021թ.-ի հոկտեմբերի 14-ին կայացած մանկավարժական խորհրդի նիստին մասնակցում էին մանկավարժական խորհրդի 104 անդամ, բացակա՝ 10-ը:

Օրակարգում՝

1. Երևանի Ա. Հովհաննիսյանի անվան հ. 194 հիմնական դպրոցի տնօրենի թափուր պաշտոնի մրցույթի հավակնորդ Նունե Նվերի Մանուկյանի դպրոցի 2021-2026թթ. զարգացման ծրագրի ներկայացում:

2. Համաձայն պետական հանրակրթական ուսումնական հաստատության տնօրենի ընտրության կարգի՝ մանկավարժական խորհրդի անդամների փակ քվեարկություն:

3. Հաշվիչ հանձնաժողովի կազմի հաստատում և փակ քվեարկության արդյունքների ամփոփում:

Լսեցին՝

1. Երևանի Ա. Հովհաննիսյանի անվան հ. 194 հիմնական դպրոցի տնօրենի թափուր պաշտոնի մրցույթի հավակնորդ Նունե Նվերի Մանուկյանի՝ դպրոցի 2021-2026թթ. զարգացման ծրագրի ներկայացումը: */Զեկուցող՝ Ն. Մանուկյան/*

Հավակնորդը նշեց, որ ծրագիրը կազմված է առաջիկա հնգամյա ժամանակահատվածի համար: Ներկայացրեց դպրոցի առաքելությունը, տվեց դպրոցի ընդհանուր բնութագիրը, մասնավորեց դպրոցի թույլ և ուժեղ կողմերը, նշեց դպրոցի զարգացման ուղղությունները, նպատակները և վերջնարդյունքը: Անդրադարձավ կրթության բարեփոխումների խնդիրներին, որոնց մեջ ընդգծեց մանկավարժների որակական բարելավումը (ատեստավորումը), նախագծային ուսուցման կիրառումը, էկոլոգիական խնդիրները և այլն:

Խոսվեց նաև ֆինանսական մեխանիզմների ներդրման, դրամաշնորհային ծրագրերի մասնակցության, հավելյալ ֆինանսական միջոցների ներգրավման մասին, որոնք ուղղված կլինեն դպրոցի նյութատեխնիկական, շենքային պայմանների բարելավմանը, ուսուցիչների մասնագիտական որակների բարձրացմանը:

Ըստ էության արտահայտվեցին ուսուցիչներ Ն. Հախվերդյանը, Ս. Սահակյանը, Գ. Կնյազյանը: Նշեցին, որ հավակնորդի դպրոցի զարգացման ծրագիրը համակողմանիորեն ներկայացնում է կրթության զարգացման ապահովման հիմնական ուղղությունները, որոշակիորն վերլուծված էր կոնկրետ անելիքները, ակնկալվող արդյունքները և ռիսկերը:

2. Փակ քվեարկության արդյունքների ամփոփման նպատակով հաշվիչ հանձնաժողով ստեղծելու միասին:

Հաշվիչ հանձնաժողովի կազմում առաջադրվեցին Ա. Մինասյանը, Հ. Կարապետյանը, Ն. Բալոյանը:

Որոշեցին՝

Հաստատել հաշվիչ հանձնաժողովի կազմը՝

1. Ա. Մինասյան
2. Հ. Կարապետյան
3. Ն. Բալոյան

3. Համաձայն պետական հանրակրթական ուսումնական հաստատության տնօրենի ընտրության կարգի՝ տեղի ունեցավ մանկավարժական խորհրդի անդամների փակ քվեարկություն: Հաշվիչ հանձնաժողովի ներկայացրած արդյունքներով մանկավարժական խորհրդի կողմից տնօրենի թեկնածու ընտրվեց հավակնորդ Ն. Մանուկյանը՝ 104 կողմ, 0 դեմ արդյունքներով:

Որոշեցին՝

Մանկավարժական խորհրդի թեկնածու հաստատել դպրոցի տնօրենի հավակնորդ Նունե Նվերի Մանուկյանին:

Մանկավարժական խորհրդի նախագահ՝ **Ն. Մանուկյան**

Քարտուղար՝ **Ս. Սահակյան**